

Տնօրենի խոսքը

Մենք մեզ «մտածող կենտրոն» կամ, այսպես ասած, «թիկնաթան» ենք համարում: Արդեն տաս տարի է, առանց ավելորդ գովազդի, առանց ինքնանպատակ մարտնչելու, խուսաճվելու՝ պատեհական հոսանքների ազդեցությունից, առանց հուսահատության կամ գլխակորույս ոգևորության՝ մենք նույն գործն ենք անում: Միտք ենք «արտադրում»:

Անցած տաս տարիների ընթացքում, մեր գործընկեր կազմակերպությունների հետ միասին, մենք ոչ միայն ստեղծել ու ստեղծագործել ենք, այլև փորձել ենք մտածողություն փոխել: Փորձել ենք հասարակական-քաղաքական գիտակցության մեջ սերմանել, որ որոշումների մշակման գործընթացում փորձագիտական հանրության դերակատարության հետևողական ավելացումն այլընտրանք չունի: Փաստորեն, մի կողմից մենք աշխատել ու արդյունք ենք ստեղծել, մյուս կողմից ստիպված ենք այդ արդյունքի համար պահանջարկ ձևավորել: Եվ պարտադրված ենք եղել անընդհատ ապացուցել, որ ճշմարտությունը մեկը չէ, ավելին՝ միայն որոշում կայացնողներին չէ, և կա նաև այլընտրանքային կարծիք, որը շատ հաճախ կարող է անասելի պիտանի լինել և որը միշտ պետք է հաշվի առնել:

Տաս տարի անց մենք արձանագրում ենք մեր համեստ ներդրումը քաղաքականության մշակման ամենատարբեր ոլորտներում՝ տարածաշրջանայինից մինչև սոցիալական, տուն-դարձի խրախուսումից մինչև ժողովրդավարական ինստիտուտների զարգացում: Այսօր մեր աշխատանքի արդյունքները մենք կարող ենք ընդունված օրենքների ու նորմատիվ որոշումների տողերում, միջազգային ու տեղական վերլուծություններում ու ամենատարբեր ոլորտային հայեցակարգերում, պետական ու համայնքային բյուջեներում և լրատվական հոսքերի տողատակում: Որպես կանոն, մենք չենք երևում, բայց հաճախ ենք հաճույքով արձանագրում մեր որևէ կոնկրետ մտքի հաղթանակը: Մենք հավատում ենք, որ ստեղծարար գաղափարը, որը վեր է պարզ գագաթականությունից ու նեղ շահերից և լավ մշակված է, միշտ էլ իր համար ուղի կհարթի: Իսկ եթե ոչ, համախոհների, ընկերների ու գործընկերների հոծ բանակը, նրա աջակցությունը, մեկնած ձեռքը, շատ հաճախ մեզ թույլ է տալիս օգնել լավ գաղափարի հաղթարշավին ամենատարբեր աստիճաններում:

Իրական հանճարեղ մտքերի ու գաղափարների կրողները Հայաստանի ու ԼՂՀ տասնյակ հազարավոր մարդիկ են, ովքեր, երբեք չեն վարանել ամառվա տապին թե սարերի ձմեռային սառնամանիքին, ամենահեռավոր գյուղերում, հանրապետության բոլոր քաղաքներում ու Արցախի համայնքներում հարյուրներով հավաքվել և կենտրոնի փորձագետների հետ քննարկել մեր ժողովրդի համար կարևորագույն հարցեր: Մենք բազմիցս համոզվել ենք՝ ճշմարտությունը ժողովրդական արմատներ ունի և քաղաքականության լեզվով շարադրված մեր բարդ ստորադասական գրավոր առաջարկներն մեծապես հենց «ժողովրդական» հիմք ունեն: Մենք մեզ վստահ ենք զգում նաև դրանով:

Կենտրոնը մշտապես ամենաակտիվ դերակատարներից է եղել բոլոր հարևանների, ժողովուրդների հետ քաղաքակիրթ հարաբերությունների ձևավորման ու հասարակական դիվանագիտության ակտիվացման հարցում: Մենք նույնպես հետևողական ենք նաև բանակի, ամուր պետության և կայացած ժողովրդավարության համար ամենօրյա աշխատանքում:

Թևան Պողոսյան

ՄԶՄԿ գործադիր տնօրեն

ՄԶՄԿ Լրատուն հրապարակվում է 2010թ. ապրիլից: Լրատուն նպատակ ունի բարելավելու մեր հաղորդակցությունը Հայաստանում և տարածաշրջանում քաղաքացիական հասարակության, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև զարգացման աջակցող կառույցների՝ մեր գործընկերների հետ: Հուսով ենք, որ Լրատուն օգտակար կլինի Ձեզ համար, հնարավորություն կընձեռի տեղեկանալ մեր ընթացիկ աշխատանքին, կներկայացնի մեզ ու մեր գործունեությունը:

Ծրագրերի ընտրանի

Առանց հղումների իրավունքի քննարկումներ

Հակամարտությունների ազդեցությունը մարդու իրավունքների պաշտպանության վրա

Ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության խնդիրը լուրջ մարտահրավեր է ժողովրդավարության կայացմանը թե՛ անցումային հասարակություններում, թե՛ Եվրամիության տարածաշրջանում: Փոքրամասնությունների ներկայացուցիչները հիմնականում տեղյակ չեն իրենց իրավունքներին, ուստի և հաճախ ի վիճակի չեն պաշտպանել սեփական շահերը: Միաժամանակ, չճանաչված պետությունները հայտնվում են տարածաշրջանային ինտեգրման լուսանցքում և չեն օգտվում զարգացման միջազգային նախաձեռնություններից: Այս համատեքստում կարևոր է քաղաքացիական հասարակության ինստիտուտների դերը, որոնք ի գործ են բարձրացնել փոքրամասնությունների իրազեկությունը իրենց իրավունքների վերաբերյալ և նրանց ներգրավել զարգացման ծրագրերում: Քսանվեց փորձագետներ ապրիլի 1-ին մասնակցեցին «Մարդու իրավունքներ և չճանաչված պետություններ. ազգային փոքրամասնությունները որպես հակամարտությունների և քաղաքական շահերի առարկա» առանց հղումների իրավունքի քննարկմանը: Քննարկման արդյունքում ՄԶՄԿ-ն մշակել և գործընկերներին է ներկայացրել քաղաքականության համառոտագիր:

Տարածաշրջանում հակամարտությունների ազդեցությունը եվրաինտեգրման գործընթացի վրա

Հարավային Կովկասի երկրները պաշտոնապես որդեգրել են եվրաինտեգրման ուղին: Ինտեգրման ճանապարհին պետություններն ու հասարակությունները հաղթահարում են բազմաթիվ խոչընդոտներ և օգտվում ծագող հնարավորություններից: Եվ այնուամենայնիվ, տարածաշրջանի եվրաինտեգրման ճանապարհին թերևս ամենալուրջ խոչընդոտը չկարգավորված հակամարտություններն են: Ավելին, եթե ինքնիշխան պետությունները ինտեգրման գործընթացում հարկադրված են բախվել հակամարտությամբ պայմանավորված մարտահրավերների, ապա այն ժողովուրդները, որոնք ապրում են չճանաչված կամ վիճելի կարգավիճակ ունեցող տարածքներում հաճախ զրկված են եվրաինտեգրման հեռանկարներից: Պետական կառավարման մարմինների, քաղաքացիական հասարակության կառույցների և վերլուծական կենտրոնների, գործարար համայնքի և զարգացման գործընկերների քսանյոթ գործիչներ ՄԶՄԿ հրավերով ապրիլի 23-ին մասնակցեցին «Եվրոպական ինտեգրում. ընկալումից նախաձեռնություններ» առանց հղումների քննարկմանը: Քննարկման արդյունքները ՄԶՄԿ-ն ամփոփել է քաղաքականության համառոտագրում, որը հրապարակվել է Կենտրոնի պաշտոնական կայքում:

Օտարալեզու հանրակրթություն

«Լեզվի մասին» և «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքներում փոփոխություններ կատարելու մասին կառավարության նախաձեռնությունը հանրային օրակարգում մեծ արձագանք է ստացել: Նախաձեռնության վերաբերյալ հնչում են բազմապիսի տեսակետներ և դրանք հիմնավորող փաստարկներ: Քսանչորս փորձագետներ մայիսի 11-ին մասնակցեցին «Բազմալեզու հանրակրթություն. հնարավորություն, թե մարտահրավեր» առանց հղումների քննարկմանը: Քննարկման արդյունքում մշակվել է բաղաբաղկալության համառոտագիր:

Տնտեսական զարգացումները տարածաշրջանում

Տարածաշրջանում տնտեսական իրավիճակը գնահատելու համար հարկ է հաշվի առնել տնտեսական ճգնաժամի, վրաց-ռուսական պատերազմի ազդեցությունը տարածաշրջանային տնտեսական զարգացումների վրա, շրջափակված սահմանների առկայությունը, դիվանագիտական խճճված հարաբերությունները հարևան երկրների միջև և այլն: Նշված գործոնները, ինչպես նաև երկրների ՀՆԱ-ն կարևորում են տարածաշրջանում օտարերկրյա ներդրումների և տնտեսության զարգացման առումով: Քսանհինգ փորձագետներ ՄՇՄԿ հրավերով մայիսի 12-ին մասնակցեցին «Հայ-ադրբեջանական և հայ-թուրքական գործարար հարաբերություններ. իրողությունը, պոտենցիալը, ցանկությունը և հակամարտությունը տարածաշրջանում» առանց հղումների քննարկմանը, որը կազմակերպվել էր Սևծովյան խաղաղաշինության ցանցի շրջանակներում: Քննարկման արդյունքում մշակվել է բաղաբաղկալության համառոտագիր:

Քաղաքացիական հասարակության կառույցների կայունությունը

Պետական կառավարման մարմինների, քաղաքացիական հասարակության կառույցների և վերլուծական կենտրոնների, գործարար համայնքի և զարգացման գործընկերների քսանչորս գործիչներ ՄՇՄԿ հրավերով մայիսի 21-ին մասնակցեցին «Քաղաքացիական հասարակության ինստիտուտների կայացման ֆինանսական երաշխիքները» առանց հղումների քննարկմանը: Քննարկման արդյունքները ՄՇՄԿ-ն ամփոփել է բաղաբաղկալության համառոտագրում:

Հանրային քննարկումներ

Հայաստան-ՆԱՏՕ համագործակցություն. խոսում են երիտասարդները

ՀՀ Տնտեսագիտական համալսարանի Եղեգնաձորի մասնաճյուղի շուրջ հիսուն ուսանողներ 2010թ. ապրիլի 10-ին մասնակցեցին Հայաստան-ՆԱՏՕ գործակցության վերաբերյալ հանրային քննարկմանը: ՄՇՄԿ-ն, Հայկական Ատլանտյան Ասոցիացիայի հետ համագործակցությամբ, պարբերաբար կազմակերպում է համանման հանդիպում-քննարկումներ Հայաստանի մարզերում: Երիտասարդ կանայք և տղամարդիկ բարձրաձայնեցին ավելի քան երկու հարյուր մոթեր ու առաջարկներ Հայաստան-ՆԱՏՕ գործակցության վերաբերյալ: Քննարկումները ընթացան հինգ պայմանական զարգացումների, այդ թվում՝ «Ցրված բեկորներ, սխալների կրկնություն», «Բռնուցված Կովկաս», «Հայկական ռապսոդիա» սցենարների շուրջ: Սցենարները հնարավորություն ընձեռեցին Հայաստան-ՆԱՏՕ գործակցության հեռանկարները քննարկել հնարավոր բարդ իրավիճակներում, և տարբեր անկյուններից վեր հանել մեր երկրի ու հավաքական անվտանգության հզորագույն քաղաքական ու ռազմական համակարգերից մեկի միջև հարաբերությունների շուրջ երիտասարդների մոթերն ու կարծիքները:

ՄՇՄԿ-ն հանրային քննարկումների տեխնոլոգիան հաղորդում է թուրք գործընկերներին

«Կամրջելով անդունդը» ծրագրի շրջանակներում, ՄՇՄԿ մասնագետները հանրային քննարկումների իրականացման վերաբերյալ գիտելիքներ, հմտություններ հաղորդեցին և տեխնիկական միջոցներ տրամադրեցին թուրքիայի գործընկերներին հունիսի 9-ից 14-ը Ստամբուլ կատարած այցի ընթացքում: Վերապատրաստման դասընթացում ձեռք բերած հմտությունները թուրք սեղանավարներին և գրառողներին հնարավորություն կտան հայ-թուրքական

հարաբերությունների կարգավորման շուրջ առանձին ուղղություններով հնարավոր զարգացումների շուրջ քննարկումներ վարել Թուրքիայում: ՄՇՄԿ ներկայացուցիչները հունիսի 13-ին մասնակցեցին Նաև «Հայաստան-Թուրքիա. Շրջակա միջավայրի ընդհանուր խնդիրներ» թեմայով փորձնական հանրային քննարկմանը, որը կազմակերպվել էր վերապատրաստման ընթացքում սեղանավարների ձեռք բերած հմտություններ ամրագրելու նպատակով:



Թուրքիայի գործընկերները սովորում են ՄՇՄԿ հանրային քննարկումների մեթոդաբանությունը: Հունիս 2010, Ստամբուլ, Թուրքիա:

Տեսախորհրդածողով Գյումրի, Եղեգնաձոր և Գավառ քաղաքներում

Հունիսի 25-29-ը Գյումրիի պետական մանկավարժական համալսարանի, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի Եղեգնաձորի մասնաճյուղի և Գավառի պետական համալսարանի շուրջ հարյուր հիսուն ուսանողներ մասնակցեցին Միացյալ թագավորության Ատլանտյան ասոցիացիայի և Ատլանտյան և Եվրոպական համագործակցության հունական ասոցիացիայի փորձագետների հետ տեսախորհրդածողովին, որը ՄՇՄԿ աջակցությամբ կազմակերպել էր Հայկական Ատլանտյան ասոցիացիան (ՀԱԱ): Տեսակամրջի մասնակիցները քննարկեցին Հյուսիսատլանտյան դաշինքին, այդ թվում՝ դաշինքի Եուրոպան ու պատմական զարգացմանը, ՆԱՏՕ-ում որոշումների կայացման կարգին ու կառուցակարգերին, Եվրասատլանտյան դաշինքի նոր ռազմավարական հայեցակարգի դրույթներին, ՆԱՏՕ-ի փոխակերպման ու արդի արտաքին հարաբերություններում նրա դերին, դաշինքի խաղաղաշինական և խաղապահ գործունեությանը, ՆԱՏՕ-ի ընդլայնման ու նրա հետ գործընկերությանը, Հայաստան-ՆԱՏՕ գործակցությանը վերաբերող հարցեր: Տեսախորհրդածողովներն ուղղված են բաց և անկեղծ քննարկման միջոցով հավաքական անվտանգության ապահովման հյուսիսատլանտյան խոշորագույն կառույցի վերաբերյալ հայ երիտասարդների իրազեկության մակարդակի բարձրացմանը: 2007 թվականից ի վեր



Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի Եղեգնաձորի մասնաճյուղի ուսանողները ՆԱՏՕ-ի գործընկերների հետ տեսախորհրդածողովում: Հունիս 2010, Եղեգնաձոր:

ՀԱԱ-ն և ԱՏՏՕ-ի ամենամյա կրթարշավներ է կազմակերպում հանրապետությունում:

Համաժողովներ և սեմինարներ

Եղի՛ր ուժեղ, կանխիր բռնությունը

Առանց տղամարդկանց ակտիվ գործողությունների և իրենց պատասխանատվության գիտակցության գենդերային բռնությունը չի վերանա հասարակություններից: Հարավային Կովկասում վիթխարի աշխատանք կա իրականացնելու մեր ընտանիքներում, աշխատավայրերում և առհասարակ հասարակության մեջ առկա գենդերային բռնության վերացման ուղղությամբ: Թվում է, սրան հասնելու համար պատերազմներից ծվատված Հարավային Կովկասի պատրիարխալ հասարակությունները երկար ճանապարհ ունեն անցնելու: Այդուհանդերձ, նույնիսկ ամենաերկար ճամփորդությունը սկսվում է առաջին քայլից: Հայաստանից, Ադրբեջանից և Վրաստանից երեւոյն տղամարդ հավաքվել էին այդ առաջին քայլը կատարելու նպատակով: 2010թ. ապրիլի 14-18-ը Միավորված ազգերի Բնակչության հիմնադրամը Թբիլիսիում կազմակերպել էր գենդերային բռնության դեմ պայքարում տղամարդկանց դերի և պատասխանատվության վերաբերյալ «Տղամարդիկ խոսում են տղամարդկանց հետ» խորագրով սեմինար, որին մասնակցեցին տարբեր ազգության, տարիքի և մասնագիտության տղամարդիկ: Նրանց բոլորին համախմբել էր մի ընդհանուր գաղափար. պայքարը բռնության դեմ՝ խնդիրը բարձրաձայնելու և բռնության դեմ գործողությունները համատեղ իրականացնելու միջոցով: Սեմինարը վարեց գենդերային բռնության դեմ պայքարի համաշխարհային առաջամարտիկներից մեկը՝ իրապարակախոս, դասախոս, խորհրդատու, «Մայիտակ ժապավեն» շարժման համահիմնադիր՝ դոկտոր Մայքլ Կաուֆմանը: ՄՍՄԿ-ն աջակցեց սեմինարի կայացմանը՝ ապահովելով Միավորված ազգերի Բնակչության հիմնադրամի կողմից ֆինանսավորվող «Պայքար Հայաստանում գենդերային բռնության դեմ» ծրագրի շահառուների մասնակցությունը: Տասր տղամարդ, որոնք վերապատրաստվել էին ՄՍՄԿ-ի գլխավորած հայաստանյան հասարակական կազմակերպությունների կոնսորցիումի իրականացրած դասընթացներում, մասնակցեցին սեմինարին և ձեռք բերեցին գենդերային բռնության դեմ պայքարի վերաբերյալ նոր գիտելիքներ և հմտություններ: Մասնակիցները կշարունակեն գործել իրենց երկրներում և առաջնորդել տղամարդկանց՝ այս ուղղությամբ իրականացվող քայլերը:

«Կամրջելով անդունդը»

2010թ. մայիսի 17-18-ին Լիբանանի Չահլե քաղաքում ՄՍՄԿ գործադիր տնօրեն Թևան Պողոսյանը և փորձագետ Աշոտ Խուրշուդյանը մասնակցեցին «Կամրջելով անդունդը» Մերձավոր Արևելքի և Կովկասի տարածաշրջանային առաջին համաժողովին: Համաժողովը Հայաստանի, Թուրքիայի, Իրաքի և Լիբանանի կազմակերպություններին հնարավորություն ընձեռեց քննարկելու, տարածաշրջանում խաղաղության և արդարության հաստատման հանրային քաղաքականության զարգացման գործընթացը: Համաժողովի ընթացքում «Կամրջելով անդունդը» ամերիկյան կազմակերպությունը ներկայացրեց իր ծրագիրը՝ ստեղծել էլեկտրոնային կայք, որը կներկայացնի գործընկեր կազմակերպություններին և հնարավորություն կընձեռի կայքից օգտվողների հետ մտքերի փոխանակություն իրականացնել: «Կամրջելով անդունդը» հիմնական գաղափարը համաժողովում համաձայնեցված մանդատի ձեռքբերումն էր, որը կարող է միավորել ԱՄՆ քաղաքացիների և «Կամրջելով անդունդը» ծրագրի գործընկեր կազմակերպությունների ջանքերը խաղաղարար քաղաքականությունը խթանելու գործում:

Հայաստան-ԱՏՏՕ հարաբերությունների մասին հայ երիտասարդների ընկալումները

Հունիսի 16-ին ԱՏՏՕ/Եվրաստանտյան համագործակցության խորհրդի (ԵԱՀԿ) «Հանրային կարծիքի բարելավումը ԱՏՏՕ-ի գործողությունների և անվտանգության/պաշտպանության ոլորտի բարեփոխումների վերաբերյալ» սեմինարին ներկայացվեց Երևանում և Հայաստանի ինը մարզերում երիտասարդների շրջանում ՄՍՄԿ կողմից իրականացված տասը հանրային քննարկումների հիման վրա Կենտրոնի կատարած վերլուծությունների նախնական

արդյունքները: Վերլուծության արդյունքները ներկայացնում են երիտասարդ հայաստանցիների պատկերացումները Հայաստան-ԱՏՏՕ համագործակցության հեռանկարների տարբեր խնդիրները: Վերլուծության արդյունքներն ամփոփված են 60 էջանոց զեկույցում, որը տեղակայված է Կենտրոնի կայքում:

ՄՍՄԿ-ն՝ մամուլում

ՄՍՄԿ-ն երեք գործընկերների հետ գործելու է հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման ուղղությամբ

Հայ-թուրքական հարաբերությունների ապագան Հայաստանի քաղաքացիական հասարակության ինստիտուտների ուշադրության հիմնական առարկաներից մեկն է: Հարաբերությունների զարգացման ներկա շրջադարձային փուլում այդ կազմակերպությունները ձգտում են իրենց ուժերը հնարավորին չափով ներդնել՝ ի նպաստ հարաբերությունների բարելավման գործընթացի: Այս համատեքստում 2010թ. ապրիլի 26-ին հայաստանյան քաղաքացիական հասարակության չորս կազմակերպությունների՝ Եվրասիա համագործակցության հիմնադրամի, Երևանի մամուլի ակումբի, Հայաստանյան արդյունաբերողների և գործարարների (գործատուների) միության և Մարդկային զարգացման միջազգային կենտրոնի ղեկավարները ստորագրեցին Համագործակցության հուշագիր հայ-թուրքական հարաբերությունների բարելավման նպատակով միասնական նախաձեռնություններով հանդես գալու մասին, հաղորդում է «Ազատություն» ռադիոկայանը: Սույն հուշագրով կողմերը որոշել են միասնաբար համակարգել համագործակցության շրջանակներում իրականացվող ծրագրերը, ինչպես նաև համատեղել ուժերը հարաբերությունների բարելավման ուղղված նպատակները սահմանելու և դրանց իրագործելու ճանապարհին: Արմենալեյտի մամուլի սրահում տեղի ունեցած ասուլիսում ՄՍՄԿ գործադիր տնօրեն Թևան Պողոսյանը նշել է, որ չորս կազմակերպություններն էլ բազմամյա փորձ ունեն հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման ոլորտում, ուստի համատեղ քաղաքացիական նախաձեռնությամբ հանդես գալը գործընթացի արդյունավետ զարգացման տեսանկյունից էական նշանակություն կունենա: Ըստ Արմենալեյտի՝ Արդյունաբերողների և գործարարների (գործատուների) միության նախագահ Արսեն Ղազարյանը նշել է, որ հասարակական կարծիք ձևավորելը և դրա վրա ազդելը խիստ կարևոր է: «Եթե մենք չազդենք թուրք հասարակության կարծիքի վրա, ապա հասարակությունը չի ստեղծի մի շերտ, որը կստիպի քաղաքական գործիչներին փոխվել: Թուրքերի «քավարանը» Հայաստանն է, մեզանով պետք է մաքրվեն և մոտեն եվրոպական արժեքային համակարգի մեջ»:

ՄՍՄԿ գործադիր տնօրենն ընտրվեց Արևելյան գործընկերության Ազգային պլատֆորմի խորհրդի անդամ

2010թ. հունիսի 7-ին Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամի աջակցությամբ, Երևանի «Կոնգրես» հյուրանոցի խորհրդակցությունների սրահում տեղի ունեցավ Եվրամիության Արևելյան գործընկերության (ԱԳ) Հայաստանի ազգային պլատֆորմի հիմնադիր ժողովը՝ անդամ 145 կազմակերպություններից 136-ի ներկայացուցիչների մասնակցությամբ: Ժողովի ընթացքում տեղի ունեցան Ազգային պլատֆորմի առաջիկա վեց ամիսների աշխատանքը համակարգող խորհրդի անդամների ընտրությունները: Առաջադրված 50 կազմակերպություններից ընտրվեցին 20 ներկայացուցիչներ՝ այդ թվում նաև ՄՍՄԿ գործադիր տնօրեն Թևան Պողոսյանը, հաղորդում է «Արմենիա» լրատվական գործակալությունը:

«Լեռնային Ղարաբաղի խնդրի կարգավորումը. Հասարակ մարդկանց ձայնը» գրքի շնորհանդեսը

Հունիսի 28-ին «Անի Պլագա» հյուրանոցի Նաիրի դահլիճում տեղի ունեցավ «Լեռնային Ղարաբաղի խնդրի կարգավորումը. Հասարակ մարդկանց ձայնը» գրքի շնորհանդեսը, հաղորդում է «Պանորամա» լրատվական գործակալությունը: Գրքում ամփոփված է Հայաստանի (10), Ադրբեջանի (10) և Լեռնային Ղարաբաղի (3) բնակավայրերում զուգահեռ անցկացված համա-

քաղաքային քննարկումներին արտահայտված մտքերի ու կարծիքների համեմատական վերլուծությունը: Քննարկումներն իրականացվել են Մարդկային զարգացման միջազգային կենտրոնի (Հայաստան) և Երիտասարդությունը հանուն զարգացման (Ադրբեջան) կողմից՝ Երևանում Բրիտանական դեսպանատան օժանդակությամբ՝ Հակամարտությունների կանխարգելման գլոբալ հիմնադրամի միջոցներով: Ընդհանրապես բացման խոսքով հանդես եկավ Հայաստանում Միացյալ Թագավորության դեսպան Չարլզ Լոնդսելլը: ՄՉՄԿ գործադիր տնօրեն Թևան Պողոսյանը նշեց, որ գրքում տեղ գտած հանրության մտքերը կարող են օգտակար լինել վերլուծաբանների, հետազոտողների, ինչպես նաև որոշում կայացնողների համար: ՄՉՄԿ փորձագետ Աշոտ Խուրջուդյանը ներկայացրեց գրքից օգտվելու սկզբունքները: Ըստ Հայաստանում Լեռնային Ղարաբաղի մշտական ներկայացուցիչ Կառլեն Ավետիսյանի՝ պետք է հասնել նրան, որ նմանատիպ քննարկումները և մտքերի փոխանակման գործընթացը տեղի ունենա ոչ միայն առանձին-առանձին կամ երրորդ երկրների տարածքում՝ այլև դեմադրել՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում, Հայաստանում և Ադրբեջանում:

ՄՉՄԿ-ն Հայաստանում գեներալի բռնության վերացման ազգային ծրագրի նախագիծը մշակող աշխատանքային խմբի անդամ

Հունիսի 17-ին Հայաստանում Գեներալի բռնության դեմ պայքարի միջգերատեսչական հանձնաժողովի որոշմամբ ստեղծվել է «Հայաստանում գեներալի բռնության վերացման 2011-2014թթ. ազգային ծրագրի» նախագիծը մշակող աշխատանքային խումբ, որի կազմում ընդգրկվել է ՄՉՄԿ ներկայացուցիչ Վահան Ասատրյանը, հաղորդում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության պաշտոնական կայքը:

Մարդկային զարգացման միջազգային կենտրոնը նշեց իր տասնամյա հոբելյանը

Հանրապետության տոնի նախօրեին, ս/թ մայիսի 27-ին, Մարդկային զարգացման միջազգային կենտրոնը հարյուրավոր գործընկերների մասնակցությամբ մեծ հանդիսավորությամբ նշեց իր տասնամյա հոբելյանը: Ողջունի խոսքում Կենտրոնի գործադիր տնօրեն Թևան Պողոսյանը նշեց. «Արդեն տաս տարի է, առանց գովազդի, առանց ինքնակապտակ մարտնչելու, խուսանավելով պատեհական հոսանքների ազդեցությունից, առանց հուսաթափվելու կամ գլխակորույս ոգևորության՝ մենք նույն գործն ենք անում. միտք ենք «արտադրում»: Այսօր մեր աշխատանքի արդյունքները մենք կարող ենք ընդունված օրենքների ու նորմատիվ որոշումների տողերում, միջազգային ու տեղական վերլուծություններում ու ամենատարբեր ոլորտային հայեցակարգերում, պետական ու համայնքային բյուջեներում և լրատվական հոսքերի տողատակում: Որպես կանոն, մենք չենք երևում, բայց հաճախ ենք հաճույքով արձանագրում մեր որևէ կոնկրետ մտքի հաղթանակը»: Կենտրոնի հետ բեղմնավոր համագործակցության համար ՄՉՄԿ չորս տասնյակ գործընկերներ ստացան շնորհակալագրեր և հուշանվերներ: Հյուրերին ներկայացվեց նաև Կենտրոնի տասնամյա գործունեությունն ամփոփող գրքուկը:

ՄՉՄԿ-ի մասին՝ մանրամասն

2000թ. մարտին հիմնադրված Մարդկային զարգացման միջազգային կենտրոնը (ՄՉՄԿ) Հարավային Կովկասի առաջատար վերլուծական կենտրոն է, որը համախմբել է հանրային և մասնավոր հատվածներում խոր ակադեմիական գիտելիքներ և աշխատանքային հարուստ փորձ ունեցող բարձրակարգ վերլուծաբանների և հետազոտողների: Մեզ միավորում են ընդհանուր արժեքները, նվիրվածությունը մասնագիտական գերազանցության և էթիկայի բարձր սկզբունքներին: Մենք սերմանում/զարգացնում ենք քաղաքականության մշակման ու իրականացման մասնակցային գործընթացը, մշակում և ներդնում տարածաշրջանային, ազգային և տեղական քաղաքականության նորարարական արդյունավետ գործիքներ ու մեթոդներ:

Մեր շահառուներին, այդ թվում՝ պետական կառավարման մարմիններին, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի կառույցներին և զարգացման գործընկերներին ՄՉՄԿ-ն տրամադրում է որակյալ խորհրդատվություն, քաղաքականության վերլուծության և զարգացման/մշակման ծառայություններ: Կենտրոնը ստեղծում է նաև քաղաքականության ներկայացման/հաղորդակցության նորարարական գործիքներ և ձևավորում երկխոսության համար նպաստավոր միջավայր: Կենտրոնը երկրում և տարածաշրջանում որոշումների կայացման գործընթացին քաղաքացիների մասնակցության նոր արդյունավետ տեխնոլոգիաների մշակման և ներդրման առաջամարտիկն է: Առաջին անգամ 2004թ. ներդրված մեթոդները շարունակականորեն կատարելագործվել և վերածվել են երրորդ սերնդի գործիքների: Իր տասնամյա գործունեության ընթացքում ՄՉՄԿ-ն դարձել է գիտելիքի և գերազանցության լավագույն կենտրոններից մեկը՝ ճանաչվելով որպես հուսալի և ցանկալի գործընկեր ինչպես մեր տարածաշրջանում, այնպես էլ ողջ աշխարհում:

Էլ. փոստ՝ mail@ichd.org
Հեռ.՝ +374 (10) 582638, +374 (10) 528321;
Ֆաքս՝ +374 (10) 527082
Հասցե՝ Երևան 0001, Սայաթ Նովա 19
 «Անի Պլազա» բիզնես կենտրոն



Տասնամյակի մոմերը: Մայիս 2010, Երևան:

Դիտեք մեզ այստեղ՝ www.vimeo.com/ichd

Հետևեք մեզ այստեղ՝ www.facebook.com/ichd.thinktank

Միացե՛ք մեզ այստեղ՝ <http://groups.to/ichd-thinktank>

Այցելե՛ք մեզ այստեղ՝ www.ICHD.org

© Մարդկային զարգացման միջազգային կենտրոն

ՄՉՄԿ Լրատուի տպագիր տարբերակը կարող էք ձեռք բերել ՄՉՄԿ գրասենյակում

ԿՐՏԱՏԵՆԹԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ Մտածիր կանաչ